

## Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Շիրակի մարզպետին առընթեր երիտասարդական խորհրդի նոր կազմը համալրելու համար Աշոցք համայնքի ավագանին հայտարարում է մրցույթ, համայնքի կողմից խորհրդի ոչ պետական հատվածը ներկայացնող անդամի ընտրության համար:

Մրցույթին կարող են մասնակցել 16-30 տարեկան այն երիտասարդները, որոնք՝  
ա) տիրապետում են երիտասարդներին առնչվող կրթական, սոցիալական, զբաղվածության, առողջապահական և մշակութային խնդիրներին.

բ) ունեն երիտասարդական կազմակերպություններում տարբեր ծրագրերի կամ միջոցառումների մասնակցության փորձ.

գ) ունեն երիտասարդական քաղաքականության բնագավառում միջազգային կամ հանրապետական փորձ, պետական և հանրային կառավարման համակարգի, ծրագրերի մշակման, իրականացման և գնահատման առանձնահատկությունների իմացություն.

Մրցույթը կկայանա 2018թ. օգոստոսի 10-ին, ժամը 11:00-ին, Աշոցքի համայնքապետարանում:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է մինչև 2018թ. օգոստոսի 9-ը՝ ժամը 17:00: Մրցույթին մասնակցել ցանկացողները լրացուցիչ տեղեկություններ, ինչպես նաև դիմումի ձևը ստանալու համար կարող են դիմել Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմ (գ.Աշոցք, Հրապարակ 1), հեռ.՝ (0245) 2-14-82):

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի  
Աշոցք համայնքի ավագանի**

13.07.2018 թ.

գ. Աշոցք

